Ն՝ 6513

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար

Հակոբ Սիմիդյան

«06» 06 2025թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 158 - 25

Նախաձեռնող՝ ***«ՇԻՆ ԻՆԺ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ***
ք. Սևան, Իսակովի 3

Գործունեությունը՝ ***Գեղարքունիքի մարզային փրկարարական վարչության հատուկ ջրափրկարարական ջոկատի կայանի կառուցում***
Գեղարքունիքի մարզ

Առդիր՝ 7 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 158 - 25

«06» հունիսի **2025թ.**

Գեղարքունիքի մարզային փրկարարական վարչության հատուկ ջրափրկարարական ջոկատի կայանի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	«ՇԻՆ ԻՆԺ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն, նախագծային փաստաթուղթ
Գործունեության տեսակը՝	«Բ» կատեգորիա
Գտնվելու վայրը՝	Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք,

Ներածական մաս. «ՇԻՆ ԻՆԺ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ի կողմից նախատեսվում է Գեղարքունիքի մարզի Սևան համայնքում Սևանա լճի ափին իրականացնել ջրափրկարարական կայանի կառուցման աշխատանքներ:

Նախատեսվող գործունեությունը, համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՕ-150-Ն օրենքի 12-րդ հոդվածի, հանդիսանում է «Բ» կատեգորիայի գործունեության տեսակ:

Գործունեության իրականացման համար հիմք են հանդիսացել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման 05082020-05-0085 վկայականը, Սևանի համայնքապետարանի կողմից տրված N 12 նախագծային թույլտվությունը:

Հողամասի նպատակային նշանակությունը հատուկ պահպանվող տարածքների է, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ հանգստի համար նախատեսված, գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն:

Նկարագրական մաս. Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի Սևան բնակավայրի Հանգստի գոտի 1-ին փողոց 1/11 հասցեում, «Սևան» ազգային պարկի տարածքում: Հողամասը կառուցապատված չէ, ռելիեֆը մեղմ թեքությամբ է:

Համաձայն գնահատման հաշվետվության՝ նախատեսվող գործունեության տարածքում ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում գրանցված տեսակներ չեն արձանագրվել, տարածքը չի առնչվում պատմամշակութային, բնության հուշարձանների հետ:

Հողատարածքում ծառահատումներ չեն իրականացվելու:

Նախատեսվում է 3 հարկանի ջրափրկարարական կայանը, առանց ստորգետնյա /նկուղային/ հարկի:

Տանիքը նախատեսվում է երեք մակարդակով՝ միաթեք, կազմակերպված ջրահեռացմամբ:

Բակային տարածքում նախատեսվում են կայանատեղիներ, որոնցից 6-ը արտակարգ իրավիճակների համար նախատեսված մեքենաների համար, և ևս 20 կայանատեղի, որոնցից 3-ը նախատեսված են հաշմանդամություն ունեցող անձանց մեքենաների համար:

Տարածքը նախատեսվում է ցանկապատել ոչ հիմնական կառույցով՝ մետաղական ցանկապատով:

Նախատեսվող ջրափրկարարական կայանի տեխնիկական տվյալները հետևյալն են՝

- հողամասի մակերես՝ 5000 քմ,
- կառուցապատման մակերես՝ 304.6 քմ (6.1%),
- ճանապարհներ և մայթեր՝ 1556 քմ (31 %),
- կանաչապատ տարածքներ՝ 3140.4 քմ (62.9 %),
- շինարարական ընդհանուր մակերես՝ 715 քմ:

Նախատեսվող կառույցների նիշերը հետևյալն են՝

- շինության առավելագույն բարձր կետի բարձրությունը սեփական 0-ական նիշից նախատեսվում է 12.00 մ, ծովի մակարդակից՝ 1919.35 մ,
- մետաղական ցանկապատ՝ 1903.0 – 1907.0 մ (ոչ հիմնական շինություն),
- կայանատեղի՝ տատանվում է 1905.0-1906 մ սահմաններում (հիմնական շինություն),
- մաքրման կայան՝ 1905.36 մ (ոչ հիմնական):
- շինության 0-ական նիշը գտնվում է ծովի մակարդակից 1907 մ բարձրությամբ, (հիմնական շինություն):

Նախատեսվող շինությունը Սևանա լճից կլինի 41.2 մ, մաքրման կայանը՝ 32.7 մ հեռավորությունների վրա:

Սևանի ջրափրկարարական կայանի ջրամատակարարման, ջեռուցման, էլեկտրամատակարարման համակարգերը կիրականացվեն տարածքում գործող ինժեներական ենթակառուցվածքներից:

Բնական օդափոխությունը կապահովվի գործող պատուհանների և դռների միջոցով:

Հրդեհային անվտանգությունը ապահովելու նպատակով տեղադրվելու են հակահրդեհային փականներ:

Շահագործման փուլում կեղտաջրերի հեռացման նպատակով տեղադրվող ռուսական արտադրության *«Greenline 16»* տեսակի մաքրման կայանը նախատեսված է տնտեսական կենցաղային կեղտաջրերի վնասազերծման համար: Նախատեսվող մաքրման կայանի արտադրողականությունն ըստ տեխնիկական պարամետրերի կազմում է 16 մ^3/օր և կարող է սպասարկել 55-60 մարդու:

Նախատեսված մաքրման կայանը իրենից ներկայացնում է անջրաթափանց, պլաստիկե տարողություն, որն ունի ավտոմատացված աշխատանք: Մաքրման համակցված մեթոդը (կենսաբանական և մեխանիկական) հնարավորություն կտա կեղտաջրերի եռաստիճան և քառաստիճան՝ մինչև 94 % մաքրում, որի արդյունքում կայանից դուրս է գալու անհոտ և անհամ տեխնիկական ջուր, ինչը թույլ կտա պահպանել շրջակա միջավայրի աղտոտումը կեղտաջրերից:

Մաքրման կայանի մաքրած ջրերը կօգտագործվեն կանաչապատ տարածքների ոռոգման համար, իսկ ավելցուկային ջրերը կուղղվեն տարածքում նախատեսված անջրաթափանց սեպտիկ հոր, որտեղից ըստ ժամանակացույցի պարբերաբար կտեղափոխվեն հատուկ մեքենայի միջոցով:

Մաքրման կայանի օդափոխման բաքում առաջացած ակտիվացված տիղմը ժամանակ առ ժամանակ հեռացվելու է համապատասխան մասնագիտական կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով:

Շինարարության ընթացքում առաջացող աղմուկը և թրթռումները կապված են լինելու շինարարական տեխնիկայի, սարքավորումների և տրանսպորտային միջոցների աշխատանքի հետ: Աղմուկի մակարդակը նվազեցնելու նպատակով գնահատման հաշվետվությունում նախատեսվում են համապատասխան բնապահպանական միջոցառումներ, որոնց կիրառման դեպքում շինարարական աղմուկի և թրթռումների մակարդակը շինհրապարակի հարակից տարածքում չի գերազանցելու ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերը:

Ջրափրկարարական կայանի շինարարական աշխատանքների ընթացքում կիրականացվի հողային աշխատանքներ, հողային հանույթը կկազմի 600 մ^3, հետլիցքը՝ 400 մ^3: Ավելցուկային հողային զանգվածը՝ 200 մ^3 ծավալով կտեղափոխվի Սևանի համայնքապետարանի կողմից օրենքով սահմանված աղբավայր:

Շինարարական աշխատանքների ընթացքում բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ տարածքների ջրցանի, հողի/գրունտի խոնավացման համար և շինանձնակազմի խմելու կենցաղային նպատակների համար:

Անիվների լվացման, ջրցանի, բանվորական և ԻՏԱ անձնակազմի կոմունալ-կենցաղային կարիքները հոգալու համար ջրամատակարարումը կիրականացվի ավտոցիստերնով, խմելու որակի ջուրը շինհրապարակ կմատակարարվի ջրի տարաներով, խմելու ջուր վաճառող ընկերությունից պայմանագրային հիմունքներով:

Ջրափրկարարական կայանի կառուցապատման ժամանակ օգտագործվելու են տարբեր շինարարական նյութեր, այդ թվում երկաթբետոն, սրբատաշ և կոպտատաշ քար, փայտ, մետաղ, ապակի, բարձրորակ սվաղ, երեսապատման բարձրորակ նյութեր, ավազ, ցեմենտ, ներկանյութեր, բետոնյա կոնստուկցիաներ, մետաղական կոնստուկցիաներ և այլն:

Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում շրջակա միջավայրի բաղադրիչների (հողային, ջրային ռեսուրսներ, մթնոլորտային օդ, կենսաբազմազանություն) վրա ազդեցությունները կապված կլինեն փորման, բեռնման աշխատանքների, հողային զանգվածների տեղափոխման, շինարարական տեխնիկայի շահագործման, ջրամեկուսացման համար օգտագործվող նյութերի կիրառման, բետոնային աշխատանքների հետ: Աշխատանքների իրականացման ընթացքում հիմնական ռիսկերը կհանդիսանան՝ շինարարության փուլում հիմքերի փորման ընթացքում առաջացող փոշին և տեխնիկայի շահագործման ժամանակ առաջացող դիզելային վառելիքի արտանետումները:

Շինարարության կազմակերպման և շինարարական աշխատանքների ժամանակ նախատեսվում է շրջակա միջավայրի բաղադրիչների (հողային, ջրային ռեսուրսների, մթնոլորտային օդի, կենսաբազմազանության) պահպանության համար բնապահպանական մի շարք միջոցառումներ՝

- շինարարական հրապարակի ցանկապատում, շենքերի և շինություններ ի ծածկում համապատասխան բարձրությամբ անթափանց թաղանթով,
- ավազի, ցեմենտի, գաջի, խիճի, այլ սորուն նյութերի, հողային զանգվածների, ինչպես նաև շինարարական աղբի տեղափոխում անթափանց ծածկոցներով ծածկված տրանսպորտային միջոցներով,
- շինարարական աղբի տեղափոխում՝ դրանց հեռացման համար հատուկ հատկացված վայրեր,

02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

- շինարարական հրապարակի օրվա ընթացքում պարբերաբար ջրում՝ բացառելով կեղտաջրերի թափանցումը շինարարական հրապարակի սահմաններից դուրս, շինհրապարակի ջրցանի համար լավագույն հասանելի տեխնոլոգիաների և աղտոտող նյութերի արտանետումները փոշենստեցնող (փոշեզսպող) թնդանոթ սարքավորումների օգտագործում,
- շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակի ստուգում,
- ավազի, ցեմենտի, գաջի, խճի, այլ սորուն նյութերի, հողային զանգվածների, ինչպես նաև շինարարական աղբի պահեստավորում փակ տարածքներում կամ ծածկում անթափանց թաղանթներով,
- Սևանա լճի, «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տարածքների վրա ազդեցությունների բացառում,
- փոշենստեցման համար ջրցանի իրականացման դեպքում, բացառել մակերևութային հոսքերի առաջացումը,
- բանվորական և ԻՏԱ անձնակազմի կոմունալ-կենցաղային կարիքները հոգալու համար շինհրապարակում ժամանակավոր բիոզուգարանների տեղադրում, շինաշխատանքների ավարտից հետո դրանց ապամոնտաժում,
- անիվների լվացումից առաջացած կեղտաջրերի, անձրևների ժամանակ առաջացող շինարարական հոսքաջրերի ուղղորդում պարզարան, մեխանիկական նստեցում, նստվածքի հեռացում և այլն:
- շինարարական տեխնիկայի տեխնիկական սպասարկման և կայանման վայրերում ավազի կամ մանրախճի տեղադրում և այլն:

Շինարարական տեխնիկայի համար համապատասխան վառելիքի լիցքավորումը և յուղումը իրականացվելու է շինհրապարակից դուրս լցակայաններում կամ սպասարկման կետերում: Անհրաժեշտ բետոնը մատակարարվելու է շինհրապարակ պատրաստի տեսքով, մասնագիտացված ընկերության կողմից:

Շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր արտակարգ իրավիճակների (հրդեհի առաջացում, հեղուկ նյութերի արտահոսք, շահագործվող տեխնիկայի հետ վթարներ և այլն), այդ թվում նաև աղմուկի և թրթռումների հնարավոր ազդեցության բացառման, նվազեցման, կենսաբազմազանության և էկոհամակարգերի պահպանման համար ևս նախատեսվում են մի շարք բնապահպանական միջոցառումներ, որոնք նկարագրված են գնահատման հաշվետվության համապատասխան բաժիններում:

Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող բոլոր թափոնատեսակների վտանգավորության դասի, ֆիզիկական բնութագրերի, քանակների վերաբերյալ տեղեկատվությունները ներակայցված է գնահատման հաշվետվության համապատասխան բաժնում:

Առաջացող թափոնների համար շին. հրապարակում կնախատեսվեն պահման հարթակներ, իսկ որոշ թափոնատեսակների համար նաև կոնտեյներներ: Շինարարական աղբը որոշակի քանակներ կուտակվելուց հետո հեռացվելու է տեղական ինքնակառավարման վարման մարմինների կողմից հատկացված աղբավայր: Եռակցման խարամը փոքր քանակներով կխառնվեն կենցաղային աղբի հետ և կհեռացվեն աղբավայր: Սև և գունավոր մետաղները կհավաքվեն և պարբերաբար կհանձնվեն մասնագիտացված ընկերությունների:

Նախատեսված բնապահպանական բոլոր միջոցառումները ներառված են բնապահպանական կառավարման պլանում:

Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է մասնահանել ամբողջ շինարարության ընթացքում 950 հազ. ՀՀ դրամ:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է իրականացնել տարածքի կանաչապատում խոտածածկի /գազոն/ տեսքով: Նախատեսվում է կազմակերպված ոռոգման ցանց, ոռոգումը իրականացվելու է ցնցուղային եղանակով, նախատեսվում են նաև ռետինե խողովակներ ոռոգումը ամբողջությամբ կազմակերպելու համար:

Նախատեսվող ջրափրկարարական կայանի կառուցման աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսված է իրականացնել նաև շրջակա միջավայրի բաղադրիչների վրա հնարավոր բացասական ազդեցության կանխարգելման, մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումներ՝

1. մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx) արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ ամիսը մեկ անգամ հաճախականությամբ,
2. փոշենստեցման նպատակով տարածքի ջրցանում՝ տարվա շոգ և չոր եղանակներին՝ օրական 2 անգամ,
3. օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով՝ հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ անգամ հաճախականությամբ, աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ անգամ հաճախականությամբ,
4. կենսաբազմազանության մշտադիտարկումներ՝ տարեկան մեկ անգամ:

Պատճառաբանական մաս. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ հանրային ծանուցումը և լսումներն իրականացվել են Գեղարքունիքի մարզի Սևանի համայնքապետարանում:

Հանրային լսումներում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության:

Գնահատման հաշվետվության վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, քաղաքաշինության կոմիտեից, կադաստրի կոմիտեից, Գեղարքունիքի մարզպետարանից, Սևանի համայնքապետարանից, «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ից, ԳԱԱ Սևանա լճի պահպանության փորձագիտական հանձնաժողովից, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից, որոնք հաշվի են առնվել հաշվետվության լրամշակման մեջ:

Ամփոփելով գնահատման հաշվետվության բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք առնչվում են շինարարական աշխատանքների հետ, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում, դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ:

Ներկայացվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված են փորման, բեռնման աշխատանքների, հողային զանգվածների տեղափոխման, շինարարական տեխնիկայի շահագործման, ջրամեկուսացման համար օգտագործվող նյութերի օգտագործման, բետոնային աշխատանքների հետ:

Թվարկված աշխատանքների ազդեցությունը նվազեցնելու նպատակով նախատեսված են բնապահպանական միջոցառումներ:

Փորձաքննական պահանջներ

1. Նախատեսվող գործունեությունն իրականացնելիս առաջնորդվել «Սևանա լճի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի պահանջներով:
2. Ջրափրկարարական կայանի կառուցման և շահագործման ընթացքում անհրաժեշտ է պահպանել ՀՀ կառավարության 2008 թվականի դեկտեմբերի 18-ի «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի և դրան հարող տարածքներում հողամասերի վարձակալության, կառուցապատման իրավունքի տրամադրման և քաղաքաշինական գործունեության իրականացման մասին» № 1563-Ն որոշման պահանջները:
3. Կառուցապատման և շահագործման ընթացքում անհրաժեշտ է պահպանել ՀՀ կառավարության 2006 թվականի մարտի 23-ի «Սևանա լճի ջրհավաք ավազանի կենտրոնական և անմիջական ազդեցության գոտիների բնակավայրերում և բնակավայրերից դուրս օբյեկտների շահագործումից առաջացող կեղտաջրերի մաքրման մասին» № 397-Ն որոշման պահանջները:
4. Գործունեության իրականացման ընթացքում առաջնորդվել ՀՀ կառավարության 2002 թվականի հունվարի 24-ի «Սևանա լճի էկոհամակարգի վրա բացասական ազդեցություն ունեցող նյութերի, կենսածին տարրերի, ծանր մետաղների կամ դրանց միացությունների և այլ նյութերի ցանկը հաստատելու մասին» № 57 որոշման պահանջներով, բացառելով Սևանա լճի աղտոտումը, վտանգավոր նյութերի, կեղտաջրերի ներթափանցումը, ջրային ռեսուրսի որակական հատկությունների փոփոխումը:
5. Կեղտաջրերի մաքրման գործընթացն իրականացնել բացառապես մաքրման կայանի միջոցով: Մաքրման կայանի համակարգում ներառել հավելյալ, այլ արդի տեխնոլոգիաներով մաքրում, որի արդյունքում մաքրված հոսքաջուրը Սևանա լիճ թափվելու դեպքում կհամապատասխանի ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի «Կախված տեղանքի առանձնահատկություններից՝ յուրաքանչյուր ջրավազանային կառավարման տարածքի ջրի որակի ապահովման նորմերը սահմանելու մասին» № 75-Ն որոշմամբ հաստատված Հավելված № 12.1-ի Սևանա լիճ թափվող ջրերի որակի 1-ին կամ 2-րդ կարգի ցուցանիշներին:
6. Շինարարության ընթացքում ապահովել բնապահպանական կառավարման և մոնիթորինգի պլաններում նախատեսված միջոցառումների իրականացումը սահմանված ժամանակահատվածում:
7. Շինարարական աշխատանքների ընթացքում անհրաժեշտ է իրականացնել կենսաբազմազանության մշտադիտարկումներ և առաջնորդվել ՀՀ կառավարության 2010 թվականի հունվարի 29-ի № 72-Ն և ՀՀ կառավարության 2014 թվականի հուլիսի 31-ի № 781-Ն որոշումների պահանջներով և ըստ անհրաժեշտության իրականացնել պահպանության միջոցառումներ:
8. Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում առաջացող շինաղբի և թափոնների հեռացումն ու տեղափոխումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր:

9. Կառուցապատման աշխատանքների ընթացքում պահպանել «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի 11-րդ հոդվածով սահմանված պահանջները:
10. Մինչև կառուցապատման աշխատանքների սկսելն անհրաժեշտ է սպասարկող կազմակերպությունների կողմից տրամադրված տեխնիկական պայմաններին համապատասխան մշակել վերջնական նախագծային փաստաթղթեր և դրանք համաձայնեցնել իրավասու մարմինների հետ:
11. Նախատեսվող կանաչապատումն իրականացնել «Սևան» ազգային պարկի» ՊՈԱԿ-ի հետ համաձայնեցված:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«ՇԻՆ ԻՆԺ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Գեղարքունիքի մարզային փրկարարական վարչության հատուկ ջրափրկարարական ջոկատի կայանի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է դրական փորձաքննական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար՝ Սևակ Մարկոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
գլխավոր մասնագետ՝ Նելլի Նասիբյան